Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
հոկտեմբերի 31-ի N 1723-Ն որոշման

ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԿՇԵՅԴԵՐԱԿԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ, ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ՉԱՓԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ

1. Վկայականում նշվում են՝

1) վկայական տվող մարմնի անվանումը.

2) վկայականի հերթական համարը.

3) որակավորված անձի անունը, հայրանունը, ազգանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում).

4) որակավորման տեսակը.

5) վկայականի տրամադրման օրը, ամիսը, տարեթիվը.

6) որակավորված անձի լուսանկարը:

2. Վկայականը տրվում է անժամկետ:

3. Վկայականը վավերացվում է Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) ղեկավարի ստորագրությամբ և կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կնիքով:

4. Որակավորման վկայական ստացած ֆիզիկական անձանց տվյալները կոմիտեն հրապարակում է իր պաշտոնական կայքում:

5. Վկայականը տրվում է մեկ օրինակից: Վկայականի կրկնօրինակը դիմողին տրամադրվում է դիմումը, պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը կոմիտե ներկայացվելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում: «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» օրենքի 16.1-ին հոդվածի 12-րդ

մասով սահմանված դեպքում վերաձևակերպված վկայականը դիմողին տրամադրվում է դիմումը, պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը և որակավորված անձի անվան կամ ազգանվան փոփոխությունը հավաստող փաստաթուղթը կոմիտե ներկայացվելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում: Վկայականի կրկնօրինակ կամ վերաձևակերպված վկայական տրամադրելիս՝ լրացվում են բոլոր տվյալները՝ բացառությամբ ստորագրությունների: Կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «N_____վկայականի կրկնօրինակ» նշագրումը, և նշվում են կրկնօրինակը տալու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը: Վերաձևակերպված վկայականի վերին աջ անկյունում կատարվում է «N_____վկայականի վերաձևակերպված վկայական» նշագրումը, և նշվում են վերաձևակերպված վկայական տալու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը: Կրկնօրինակը, վերաձևակերպված վկայականը ստորագրվում և կնքվում են այն տրամադրող պաշտոնատար անձի կողմից:

Ձև 1

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N ____

_____ -ին
(անունը, հայրանունը, ազգանունը)

Որակավորված անձի լուսանկարը 3x4սմ չափսի

առ այն, որ նա մասնակցել է Կադաստրի կոմիտեի կողմից կազմակերպված գեոդեզիական և մարկշեյդերական գործունեության բնագավառում մասնագիտական որակավորման ստուգմանը: Կադաստրի կոմիտեի ղեկավարի 20__թվականի _____ _____-ի N _____-Ա հրամանի համաձայն ստացել է

ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԿՇԵՅԴԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

Կադաստրի
կոմիտեի
ղեկավար _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ. _____ _____ 20 _ թ.

Ձև 2

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N ____

_____ -ին
(անունը, հայրանունը, ազգանունը)

Որակավորված անձի լուսանկարը 3x4սմ չափսի

առ այն, որ նա մասնակցել է Կադաստրի կոմիտեի կողմից կազմակերպված քարտեզագրական, հողաշինարարական, չափագրական և հաշվառման գործունեության բնագավառում մասնագիտական որակավորման ստուգմանը: Կադաստրի կոմիտեի ղեկավարի 20__թվականի _____ _____-ի N _____-Ա հրամանի համաձայն ստացել է

ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ, ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ, ՉԱՓԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

Կադաստրի
կոմիտեի
ղեկավար _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ. _____ _____ 20 _ թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

31.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ